



38,387

կական պարտականութեան կարգով: Գյուղական հասարակական դատարանի տեխնիկական սպասարկումը իրագործում է գյուղական խորհրդի ապարատը:

Ծանոթութիւն.— Ժողովրդական ատենակալների (հասարակական դատավորների) թեկնածուներին առաջ են քաշում գյուղատնտեսական և անտառային բանվորների արհեստակցական միութեան տեղական կազմակերպութեանները, բատրակութեան և չքավորութեան խմբակները, բանվորների և գեղջկուհիների պատվիրակային ժողովները, գյուղացիական փոխողութեան կոմիտեները և տեղական այլ հասարակական կազմակերպութեանները: Ժողովրդական ատենակալների թեկնածուներ կարող են առաջ քաշել նաև քաղաքացիների առանձին խմբակներն և ընտրական իրավունք վայելող առանձին քաղաքացիները:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 10, հոդ. 126]:

2. Գյուղական հասարակական դատարանները քննում են հետևյալ գործերը՝

Ա) Ք Ր Ե Ա Կ Ա Ն՝

ա) Ապրիլի բժշկութեան մասին, յերբ բժշկութեամբ են պարագում այնպիսի անձինք, վորոնք չունեն համապատասխան բժշկական կրթութիւն: (Քրեակ. Որ. հոդ. 199).

բ) Ժողովրդական առողջութեան պաշտպանող կանոնները խախտելու մասին, յետ և այս խախտումները չեն նախատեսված քրեական որեւորքի հատուկ հոդվածներով կամ կենտրոնական և ռայոնական մարմինների պարտադիր վորսուղներով նաև իշխանութեան տեղեկութեան չտալու մասին մարդկանց և անասունների համաճարակ հիվանդութեանների մասին.

գ) պարզ սրիկայութեան մասին, այսինքն անպատկառ արարքների մասին, վոր կապակցված են հասարակութեան նկատմամբ ցույց տված անարգանքի հետ, յետ և այս հանցավորը միաժամանակ չի հայտնաբերել վայրագութեան, անպարկեշտութեան, առանձին համառութեան կամ բացառիկ հանդգնութեան և ցինիզմ (Քր. Որ. հոդ. 75 մ. 1.).

դ) զրպարտութեան մասին, այսինքն ակնհայտի սուտ և ուրիշին նշավակող հանգամանքներ տարածելու մասին. (Քր. Որ. հոդ. 176. մաս 1).

յե) խոսքով, գրութեամբ կամ դործով մեկին վիրավորանք հասցնելու մասին. (Քր. Որ. հոդ. 174).

զ) հարվածելու, ծեծելու և այլ բռնի գործողութեաններ կատարելու մասին առանց մարմնական վնաս հասցնելու. (Քր. Որ. հոդ. 158 մաս 1).

և) կոբոնտեսներին և մենտոտեսներին պատկանող անձնական (չհասարակաբնացրած) գույքի գողութեան, վոչնչացման և վնասելու մասին (սույն թվում ցանքերի, այգիների, խաղողի այգիների դիտավորյալ արածավերը և այլն բացի բամբակի ցանքերի արած ավերից), յետ և այլ արվել և առաջին անգամ և յետ և պատճառած վնասի չափը հիսուն ռուբ. ավելի չէ.

ը) առանձին չքավոր-միջակ տնտեսութեանների կողմից պետական և հասարակական առաջարկանքներից բխող պարտավորութեանները չկատարելու մասին, յետ և համապատասխան գյուղական խորհրդի կարծիքով այս տնտեսութեանների ղեկավարների նկատմամբ ավելի նպատակահարմար է կիրառել հասարակական ներգործութեան մեթոդներ, քան թե նրանց պատասխանատվութեան յենթարկել վարչական կամ դատական կարգով Վրաստանի ՍՄՀ Քր. Որ. 61 հոդ. համաձայն.

թ) գ ս է բ ս և ձ գ վ ա ծ:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 10 հոդ. 126. ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 17, հոդ. 142. 1933 թ. № 5 հոդ. 80]:

Բ) Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ա Կ Ա Ն՝

Յոթնասուն և հինգ ռուբ. վոչ ավելի գումարի այնպիսի հայցերը, վոր բխում են ստացված քային իրավահարաբերութեաններից: [ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 17, հոդ. 142. № 21 հոդ. 209]:

Գ) Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն՝

25 ռ. վոչ ավելի գումարի աշխատանքային վեճերը, վոր ծագում են վարձվող աշխատավորների և աշխատավորական վարձատուների մեջ (միանձնյա գյուղացիական տնտեսութեանների, տնայնագործների, արհեստավորների մեջ և այլն) նաև հասարակական հովիվների և վարձատուների մեջ: [ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14 հոդ. 165]:

Դ) Հ Ո Ղ Ա Յ Ի Ն՝

Հողերի աշխատավորական ոգտագործման իրավունքի վերաբերյալ այնպիսի վեճեր, վորտեղ կողմեր են հանդիսանում առանձին ծխերը կամ առանձին քաղաքացիները անկախ հայցի գումարից, նմանապես ծխի բաժանման վերաբերյալ գործերը:

Ծանոթութիւն.— Գաղաքացիական, աշխատանքային և հողային գործերը, յերբ կողմերից մեկը հանդիսանում են պետական հիմնարկութեաններ, կոոպերատիվային և հասարակական կազմակերպութեաններ կամ մասնավոր իրավական անձինք (բաժնետիրական և այլ ընկերութեաններ) յենթակա չեն գյուղական հասարակական դատարաններին:

3. Սույն կանոնադրուիթյան 2-րդ հոդ. նախատեսած գործերը անպայման քննվում են հասարակական դատարաններում, յեթև գոյուլթյուն ունեն հետևյալ պայմանները՝

ա) լիտ «Ա» «ա», «բ», «գ», «ե» կետերում թվարկած գործերը, յեթև սույն կետում նախատեսված հանրության համար վտանգավոր գործողությունները կատարված են համապատասխան գյուղական խորհրդի կողմից միավորվող տերիտորիայի վրա այնպիսի անձանց կողմից, վար մշտապես բնակվում են այս տերիտորիայի վրա.

բ) սույն լիտերայի այլ կետերում թվարկած գործերը, յեթև մեղադրվողներն և տուժողները մշտապես բնակվում են մի գյուղական խորհրդի կողմից միավորվող տերիտորիայի վրա.

գ) «Բ» և «Գ» լիտերաներում, բացի բատրակների և հովիվների վարձատուների հետ ունեցած աշխատանքայի վեճերից և «Դ» լիտերայում թվարկած գործերը, թև հայցվողներն և պատասխանողները մշտապես բնակվում են մի գյուղական խորհրդի կողմից միավորվող տերիտորիայի վրա, իսկ հողային գործերի նկատմամբ, յեթև ընդ սմին վիճելի հողամասը գտնվում և սույն տերիտորիայի վրա:

Վերև մատնանշած գործերը, բացի սույն հոդվածի «Ա» կետում նախատեսվածներից, այն դեպքերում, յերբ նրանց մեջ իբրև կողմեր մասնակցող քաղաքացիները բնակվում են զանազան գյուղական խորհուրդներով միավորվող տերիտորիայի վրա, յենթակա յեն գյուղական հասարակական դատարանի քննությանը, յերբ հայտարարություն տվողը դիմում և այն դատարանին, վորի շրջանում գտնվում և կատարած հանցազորության վայրը (քրեական գործեր), պատասխանողի բնակավայրը (քաղաքացիական և աշխատանքային գործեր), վիճելի հողամասը (հողային գործեր):

Բատրակների և հովիվների վարձատուների հետ ունեցած աշխատանքային վեճերը յենթակա յեն գյուղական հասարակական դատարանի քննությանը միայն այն դեպքում, յերբ այս դատարանին դիմում և բառնակը կամ հովիվը:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14, հոդ. 165. ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 17, հոդ. 142]:

4. Յեթև գյուղական հասարակական դատարանը գտնում և, վոր ստացված գործը յենթակա չև իր իրավասությանը կամ թևև յենթակա յև, բայց բարդ բնույթ ունի կամ պահանջում և ներգործության ավելի խիստ միջոցների կիրառում քան այդ նախատեսված և սույն կանոնադրության 14-րդ հոդվածով, նա իրավունք ունի գործը հանձնել համապատասխան ժողովրդական դատարանին քննարկելու համար ընդհանուր յենթակայության կարգով:

Ժողովրդական դատարանին սեփական նախաձեռնությամբ կամ դատախազության հայտարարության հիման վրա իրավունք և վերապահվում

վերև մատնանշած շարժարկներով ամեն մի գործ հանել գյուղական հասարակական դատարանի վարույթից և վերցնել իր քննության ընդհանուր յենթակայության կարգով:

Ծանոթություն.— Յեթև բատրակների և հովիվների վարձատուների հետ ունեցած աշխատանքային վեճերի վերաբերյալ գործերից պարզվում և, վար հայցվորին հասնում և 25 ո. ավելի կամ թև վարձատույին պետք և յենթակա քրեական պատասխանատվության աշխատանքային որենքները խախտելու համար, ամբողջ գործը պետք և հանձնվի ժողովրդական դատարանին:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14 հոդ. 165]:

5. Գործերը գյուղական հասարակական դատարաններում հարուցվում են թև կողմերի բանավոր կամ գրավոր դիմումներով, թև յերբորդ շահագրգռված անձանց, նաև արհեստակցական և հասարակական կազմակերպությունների հայտարարությունների հիման վրա:

Սույն կանոնադրության 2-րդ հոդ. լիտ. «Ա» «ա», «բ», «գ» և «ե» կետերում թվարկված գործերը քննվում են գյուղական հասարակական դատարանների կողմից նաև գյուղական խորհուրդների, դատախազության և միլիցիայի հայտարարությունների հիման վրա:

Սույն կանոնադրության 2-րդ հոդ. Ս. լիտ. «ը» կետում թվարկած գործերը քննում են գյուղական հասարակական դատարանները յեթև այդ մասին գոյություն ունի համապատասխան գյուղական խորհրդի վորոշում:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 17, հոդ. 142. 1933 թ. № 5 հոդ. 80]:

Ծանոթություն.— Բատրակների և հովիվների վարձատուների հետ ունեցած աշխատանքային վեճերի վերաբերյալ հայտարարությունները կարելի յև անել վարձատույի մոտ աշխատելու ժամանակ կամ 6 ամսվա ընթացքում, հաշվելով արձակման կամ աշխատանքից հեռացնելու օրից:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14 հոդ. 165]:

6. Գործերի քննությունը գյուղական հասարակական դատարաններում կաշկանդված չև դատավորության վորևիցե ձևական կանոններով, բացի այն կանոններից, վոր պարունակվում են սույն կանոնադրության մեջ:

Ծանոթություն 1. Գործերի վարույթը գյուղական հասարակական դատարաններում ազատ և ամեն տեսակի տուրքերից և գանձումներից:

Ծանոթություն 2. Աշխատանքային վեճերը դատարանը րււծում և աշխատանքի գործող որենքների համաձայն:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14 հոդ. 165]:

7. Գործերը գյուղական հասարակական դատարաններում քննվում են դռնբաց նիստերում նախագահողի—դատարանի նախագահի կամ նրա տեղակալներից մեկի—և յերկու ժողովրդական ատենակալների (հասարակա- դատարաններից մեկի) կազմով, վերջիններս հրավիրվում են կատարելու իրենց կան դատավորներին) կազմով, վերջիններս հրավիրվում են կատարելու իրենց պարտականությունները հերթով գյուղական հասարակական դատարանի ժողովրդական ատենակալների (հասարակական դատավորների) ցուցակները մուծված անձանց թվից:

Ծ ա ն ո թ ու թ յ ու Ն.—Աշխատանքային գործեր քննելիս վորպես ժողովրդական ատենակալներից (հասարակական դատավորներից) մեկը դատարանի կազմի մեջ մտնում է գյուղատնտեսական և անտառային բանվորների տեղական արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչը:

8. Գյուղական հասարակական դատարանում նախագահողը և ժողովրդական ատենակալները հեռացվում են գործի քննության մասնակցու- թյունից թե կողմերի բացարկով, թե իրենց սեփական հայտարարու- թյամբ հետեյալ դեպքերում՝

ա) յեթե գործով շահագրգռված են իրենք կամ իրենց մոտիկ աղբա- կանները:

բ) յեթե նրանք մասնակցել կամ մասնակցում են գործում իբրև վկա- ներ կամ կողմերի շահերի ներկայացուցիչներ:

գ) յեթե նրանք թշնամական հարաբերություն մեջ են իբրև շահա- գրգռված կողմ գործին մասնակցող անձի հետ:

Յերբ բացարկ և հայտնվում նախագահողի դեմ, համապատասխան գոր- ծի քննության ժամանակ նրան փոխարինում է ուրիշ անձ, վորն իրավունք ունի նախագահելու գյուղական հասարակական դատարանում (նախագահը, ունի նախագահելու գյուղական հասարակական դատարանում (նախագահը, ունի նախագահելու տեղապահը), իսկ յերբ բացարկ և հայտնվում ժողովրդական ատենակալի (հասարակական դատավորի) դեմ—հերթական ժողովրդական ատենակալը (հասարակական դատավորը):

9. Գործերը գյուղական հասարակական դատարաններում պետք է քննվեն գործը ստանալուց վոչ ուշ քան տասն ուրվա ընթացքում, սրիկա- յության վերաբերյալ գործերը—5 սրից վոչ ուշ, իսկ աշխատանքային գոր- ծերը ստանալուց 3 սրից վոչ ուշ:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14 հոդ. 165]:

10. Գյուղական հասարակական դատարանը պարտավոր է գործը քնն- ելիս հրավիրել գանդատավորին, պատասխանողին և մեղադրվողին, լսել նրանց բացատրությունները, անհրաժեշտության դեպքում հարցաքննել վկաներին և կատարել տեղական գննություն և ստուգարակ բոլոր միջոց-

ները ձեռք առնել գործի հանգամանքները լրիվ ու բաղմակողմանի պար- դելու համար:

Ծ ա ն ո թ ու թ յ ու Ն.—Քաղաքացիական, հողային և աշխատանքային գործերում մասնակցող կողմերը իրենց գործերը քննելիս կա- րող են փոխարինել իրենց ներկայացուցիչներով հարադատների, ըն- տանիքի անդամների և համագյուղացիների թվից, յեթե վերջիններս չեն պարապում միջնորդությամբ, վարձատրությամբ վարելով ուրիշ անձանց գործերը:

Գյուղական հասարակական դատարանը սակայն իրավունք ունի պարտավորեցնել կողմերին անձամբ ներկա լինել գործի քննության ժամանակ:

11. Յեթե գործին մասնակցող անձինք կոչնալիս ստանալով դա- տարան չեն ներկայանում, գործը կարող է քննվել նրանց բացակայու- թյամբ, հետաձգվել կամ թե կարճվել:

12. Գյուղական հասարակական դատարանում քննվող գործերը, բացի սույն կանոնադրության 2-րդ հոդ. Ա լիտ: «ա», «բ», «գ» և «դ» կետե- րում թվարկած գործերից, կարելի չէ վերջացնել կողմերի հաշուությամբ: Սակայն բոլոր այն դեպքերում, յերբ գործի հանգամանքներին նայելով գյուղական հասարակական դատարանը գտնում է, վոր կայացած հաշու- թյունը ետպես խախտում է գործին մասնակցող աշխատավորի շահերը, նա վճիռ է հանում ըստ էյության:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 17, հոդ. 142. 1933 թ. № 5 հոդ. 80]:

13. Գյուղական հասարակական դատարանի վորոշումները ընդունվում են ձայների մեծամասնությամբ, շարադրվում են կարճ և գրավոր ու հրա- պարակով հայտարարվում գործի մասնակցողներին:

14. Գյուղական հասարակական դատարանները քրեական գործերի նկատմամբ կիրառում են ներգործության հետեյալ միջոցները՝

- ա) նախազգուշացում.
- բ) հասարակական պարտավանք հրապարակելով կամ չհրապարակելով թերթերում կամ հայտարարելով գյուղի ընդհանուր ժողովում.
- գ) տասը ուրբ. վոչ ավելի դրամական տուգանք, վորը դատարանի վորոշումով տրվում է տեղական բյուջեյի ոգտին տեղական նշանակություն ունեցող կուլտուրական միջոցառումների կամ առանձին տեղական հասարա- կական կազմակերպությունների կարիքների համար.
- դ) վորոշ հասարակական աշխատանքի պարտադիր կատարումը հինգ սրվանից վոչ ավելի ժամանակով:

Ծ ա ն ո թ ու թ յ ու Ն.—Նշանակելով ներգործության չափը գյու- ղական դատարանը միաժամանակ կարող է պարտավորեցնել մեղա-

պարտին հատուցել պատճառած վնասը 50 ր. վոչ ավելի գումարի չափով:

15. Գյուղական հասարակական դատարանը յերբ ստացված քային վեճեր քննելու ժամանակ պարզում է, վոր անհարկին է միանվագ վճարել վճռած գումարը, կարող է հետաձգել կամ մատնատել վճարումը սակայն վոչ ավելի քան 3 ամիս ժամանակով:

16. Գյուղական հասարակական դատարանի վորոշումները վերջնական են, յենթակա չեն բողոքարկման և կատարվում են անմիջապես:

Այս վորոշումները կարող է վերացնել համապատասխան ռայոնի ժողովրդական դատարանը միայն հսկողութեան կարգով իր նախաձեռնութեամբ կամ դատախազի բողոքի հիման վրա:

Օ ա ն ո թ ու թ յ ու ն . — Գյուղական հասարակական դատարանի բաղադրիչներն և հովիվների վարձատույնի հետ ունեցած աշխատանքային վեճերի վերաբերյալ վճռի վերացման դեպքում, բաղադրիչ և հովիվին այս վճռի հիման վրա վճարած գումարը չի կարելի յեա գանձել, յեթե հաստատված չլինի, վոր բաղադրիչ և հովիվը ներկայացրել են դատարանին կեղծ փաստաթղթեր կամ հաղորդել են սուտ տեղեկութեւններ:

[ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 14 հոդ. 165]:

17. Այն դեպքում, յերբ կամավոր կերպով չեն կատարում գյուղական հասարակական դատարանի վորոշումը, այս վորոշումը դատարանի նախագահի համապատասխան մակարդակով հարկադիր կերպով ի կատար է ածվում գյուղական կատարածուների միջոցով:

Օ ա ն ո թ ու թ յ ու ն . — Գյուղական հասարակական դատարանի կողմից նշանակած հարկադիր աշխատանքները դատարանի նախագահի կարգադրութեամբ կարելի յե հետաձգել՝ ա) դատապարտյալի հիվանդութեան դեպքում՝ մինչև նրա առողջանալը: բ) դաշտային աշխատանքների ժամանակ — մինչև նրանց ավարտելը:

18. Գյուղական հասարակական դատարանների գործունեութեան ղեկավարութեանը զբվում է ժողովրդական դատավորների վրա: Այս դատարանների գործունեութեան հսկողութեանը իրազործում են ժողովրդական դատավորները և դատախազութեանը:

Ժողովրդական դատավորներն ու դատախազութեանն իրագործում են գյուղական հասարակական դատարանի գործունեութեան ղեկավարութեանն և հսկողութեանը այն կարգով, վոր սահմանվում է գերագույն դատարանի և հանրապետութեան դատախազի հրահանգներով, վոր հրատարակվում են նրանց փոխադարձ համաձայնութեամբ:

19. Գյուղական հասարակական դատարանը պարբերաբար իր գործունեութեան մասին հաշիվ է տալիս գյուղական խորհրդին:

ԳՈՒԻԳՐԱՅՏՐԵՍԻ ԼԻՆ ՏԳԱՐԱՆ

